


Էլեկտրական ցանկապատի տեղադրման Ձեռնարկ



**Էլեկտրական ցանկապատի հիմնադրումը
և հետագա պահպանումը**

Բովանդակություն

Ընդհանուր տեղեկություններ4

Կառուցման աշխատանքները5

Շաբաթական սպասարկումը9

Սեզոնային սպասարկումը և պահեստավորումը ձմռան ընթացքում10

Հավանական խափանումները10

Պրակտիկ խորհուրդներ.....11

Ընդհանուր տեղեկություններ

Էլեկտրական ցանկապատի համակարգը հիմնված է ՓԱՏՈՒՐԱ/PATURA էլեկտրական ցանկապատման համակարգի վրա և բաղկացած է հետևյալ հիմնական բաղկացուցիչ մասերից:

- ▶ **Ընդունիչ փոխակերպիչ սարքը** (ներառյալ մետաղական արկղը, կուտակիչը/ակումուլյատորը, արևային վահանակը և հողանցման սարքավորումը), էլեկտրական ցանկապատ ինիմպուլսային/ընդհատվող էլ. հոսանք մատակարարելու համար (5000-11000 Վոլտ, 3/10000 վայրկյանում):
- ▶ **Ցանկապատի հաղորդալարը**, որը պետք է միացված լինի ընդունիչ փոխակերպիչ սարքի հետ: Հաղորդալարը ամրացվում է ձողերի վրա միակցիչների և մեկուսիչների միջոցով: Ցանկապատի բոլոր հաղորդալարերը պետք է միացված լինեն միմյանց: Հաղորդալարը չպետք է շփում/կապ ունենա հողի, բուսականության/խոտածածկի, անկյունային փայտյա սյուների կամ այլ մետաղական մասերի հետ ինչպես օրինակ մեկուսիչի պարուրակները (շուռուպ): Հաղորդալարը բաղկացած է պոլիէթիլենային/պլաստմասե մանրաթելերից՝ մեխանիկական ամրություն ապահովելու համար և մետաղական մանրալարերից՝ էլեկտրահաղորդման համար:
- ▶ **Սյուներ:** Յուրաքանչյուր անկյունում և ամեն 50 մետրը մեկ անհրաժեշտ է տեղադրել փայտյա անկյունային սյուներ (համալրված մեկուսիչ միակցիչներով): Հիմնական սյուների միջև տեղադրվում են դեղին մետաղապլաստմասե մանրաթելային սյուներ դյուրաշարժ միակցիչներով կամ պլաստմասե սյուներ կախիչներով, որոնք ուղղորդում են ցանապատի հաղորդալարին:
- ▶ **Դարպասներ:** Յուրաքանչյուր ցանկապատ համալրված է դարպասով, որը հնարավորություն է տալիս մուտք գործել ցանկապատված տարածք: Դարպասը բաղկացած է 3 շարք զսպանակաձև էլեկտրահաղորդիչներից, որոնք միացված են ցանկապատի հաղորդալարին և մի եզրից ունեն մեկուսացման հնարավորություն: Դարպասը բացելուց հետո այն անջատվում է հոսանքից:

Կառուցման աշխատանքները

1. Սկսում ենք անկյունային փայտյա սյուների տեղադրումից, որից հետո սյուների վրա ամրացնում ենք մեկուսիչ օղակները կամ անկյունային պտտվող մեկուսիչները նախապես հաշվարկված բարձրության վրա:
2. Տեղադրում ենք դարպասի բաղկացուցիչ մասերը նպատակահարմար հատվածում: Դարպասի երկու կողմերում պարտադիր տեղադրում ենք փայտյա սյուներ: Դարպասի լայնությունը կարող է տատանվել 3-5 մետրի սահմաններում:
3. Մանր եղջերավոր անասունների համար կարելի է կիրառել ցանկապատի քառաշերտ ձևը հետևյալ բարձրություններով՝ գետնից 1.-20սմ, 2.-40սմ, 3.-65սմ և 4.-90սմ բարձրությամբ:
4. Խոշոր եղջերավոր անասունների համար կարելի է կիրառել ցանկապատի հետևյալ տարբերակները՝ եռաշերտ 30սմ 60սմ և 90սմ կամ երկշերտ 45սմ և 90սմ բարձրություններով:
5. Խոշոր և մանր եղջերավոր անասունների դեպքում կարելի է կիրառել եռաշերտ տարբերակը՝ 1.-25սմ, 2.-55սմ, 3.-90սմ: Այն դեպքերում երբ կենդանիները անցնում են ցանկապատից ներս պետք է փոփոխել ցանկապատի լարերի միջև եղած բարձրությունները կամ ավելացնել ևս մեկ գիծ:
6. Սկզբում պետք է ամրացնել վերևի հաղորդալարը փայտյա ձողերի միջև ստանալու ուղիղ գիծ միջանկյալ ձողեր ըամրացնելու համար:



Նկար 1՝ Անկյունային փայտյա ձողերը և առաջին վերևի շարքի ամրացված հաղորդալարը միջանկյալ ձողերի համար ուղիղ գիծ ձևավորելու նպատակով

7. Ամրացնել դեղին ֆիբրե կամ պլաստմասե ձողերը 5 մ հեռավորության վրա մեկը մյուսից: Ձգտեք ստանալ ուղիղ գիծ տեղադրված փայտյա անկյունային ձողերի միջև: Այն դեպքում եթե համդիպում եք անհարթության կարելի է ավելացնել միջանկյալ փայտյա ձող՝ ցանկապատի կայունությունը ավելացնելու նպատակով:
8. Միացնել հաղորդալարերը միակցիչներին համապատասխան բարձրության վրա:
9. Ստուգել, որ հաղորդալարը չհավի կամ չհատվի գետնի կամ բուսականության հետ (օրինակ՝ ծառի կամ թփի):
10. Ստուգել, որ բոլոր հաղորդալարերը միացված լինեն մեկը մյուսին:
11. Տեղադրել ընդունիչ-փոխակերպիչ սարքը, հողանցման համակարգը 1-ից 3 կետով, միացնել կուտակիչը և արևային վահանակը այնպես, որ դրական (+) բևեռները միացվեն իրար (կարմիր լարերը) և բացասական (-) բևեռները իրար (սև լարերը):
12. Միացնել ընդունիչ-փոխակերպիչ սարքը ցանկապատին:




Նկար 2՝ Հաղորդալարերի ամրացումը ձողերին



Նկար 3՝ Դեղին ֆիբրե ծողերի տեղադրումը յուր. 5մ մեկ և լարերի ամրացումը



Նկար 4՝ Հաղորդալարերի շփման խուսափումը բուսածածկի հետ (անհրաժեշտության դեպքում մաքրել բուսածածկը)



Նկար 5՝ Ընդունիչ-փոխակերպիչ սարքի միացումը ցանկապարին (կարմիր միակցիչով) և հողանցման համակարգին (կանաչ միակցիչով): Այնուհետև սարքի միացումը կուտակիչին (դրական (+) բևեռը կարմիր սեղմակով և բացասականը (-) սև սեղմակով):

13. Գործարկել ընդունիչ-փոխակերպիչ սարքը փակելով մետաղյա տուփի դռնակը



Նկար 6՝ Ամբողջական հավաքված ընդունիչ-փոխակերպիչ սարքը արևային վահանակով միացված էլ. ցանկապարին:

14. Ցանկապատի տարբեր հատվածներում չափել էլեկտրական լարումը (առավելագույն սարքից ամենահեռու անկյունում): Էլ. Լարումը պետք է լինի ավելի քան 4000 Վոլտ (չափման համար օգտագործել ցանկապատի Patura/Փատուրա չափիչ սարքը):

Շաբաթական սպասարկումը

Ցուցումներ Գալաղեր էլ. ցանկապատման կազմակերպության կողմից:

- ▶ *Փնտրել և հեռացնել ցանկացած շփման/կարճ միացման/ աղբյուր:* Հնձել կամ քաղել ստորին հատվածը նեղ շերտով նպատակ ունենալով կանխել խոտածածկի կամ մոլախոտերի շփումը ցանկապատի հետ, հետևել որպիսի ճղներ կամ այլ իրեր ընկած չլինեն էլ. ցանկապատի կամ մեկուսիչների վրա: /փորձեք լսել ընդհատվող ձայնը, որը կմատնանշի հոսանքի կորուստը և հետևելով ձայնին փորձեք գտնել կորուստի աղբյուրը/: Ցանկապատին զուգահեռ շարժվելով երկար ձողը սահեցրեք հաղորդալարի ստորին հատվածով, քանի որ հնարավոր է լինեն լարի հետ հատվող մարմիններ/խոտ, ճյուղ և այլն/, որը մի գուցե չեք ել նկատի:
- ▶ *Ստուգեք մեկուսիչները:* Վնասված կամ կոտրված մեկուսիչը կարող է թույլ տալ լարին շփվել սյան հետ, ինչը մեծ խնդիր չէ եթե սյունը փայտյա է, սակայն եթե դուք օգտագործում եք մետաղական տեաճև սյուն ապա կոտրված մեկուսիչը կարող է պատճառ հանդիսանալ,որ հոսանքը հողանցի գետնին շփվելով մետաղի հետ:
- ▶ *Ստուգեք միացումները:* Օրինակ հողանցման լարերը կարող են պոկվաց լինել և շփվել էլ. լարի հետ, ինչը կբերի հոսանքի կորստի:
- ▶ *Ստուգեք կուտակիչ սարքը:* Միացումների միջև գործված սարդոստայնը կարող է կարճմիացման պատճառ հանդիսանալ:
- ▶ *Ստուգեք մեկուսացված հաղորդալարը:* Փնտրեք հատվածներ, որտեղ լարը կարող է քեծված կամ քերված լինել, օրինակ եթե լարը անցնում է մետաղական սյան վրա արված անցքով:
- ▶ *Ստուգեք էլ. ցանկապատը:* Փնտրեք քերված հատվածները հաղորդալարի վրա և եթե նկատեք, որ բազմաշերտ հաղորդալարի մեջ մետաղական լարը վնասված է, ապա այս դեպքում այն չի կարող հոսանք հաղորդել:

Սեզոնային սպասարկումը և պահեստավորումը ձմռան ընթացքում

- ▶ Անջատեք ընդունիչ սարքը և ապամոնտաժեք արկղը արևային վահանակի հետ միասին:
- ▶ Փաթաթեք հաղորդալարը զգուշությամբ: Խուսափեք լարի ոլորվելուց, ինչը կարող է վնասել այն: Օգտագործեք թելակոճը, որի վրա սկզբում փաթաթված էր հաղորդալարը:
- ▶ Հավաքեք ցանկապատի շարժական սյուները/պլաստմասե կամ ֆիբրե/ և պահեք դրանք համայնքում ձմռան ընթացքում:
- ▶ Պահեք ընդունիչ սարքը, արկղը և մարտկոցը չոր ցրտից պաշտպանված վայրում ամբողջ ձմռան ընթացքում:

Հավանական խափանումները

Այն դեպքերում երբ էլ. ցանկապատը չի աշխատում, ստուգեք ստորև թվարկվածները.

- ▶ Առկա է արդյոք շփում ցանկապատի լարի և գետնի հետ ինչոր մի տեղ/օր. բարձր խոտածածկ, թփերի ճյուղեր, ցանկապատի սյուներ/:
- ▶ Հաղորդալարը դեռ ձգված է, ամբողջական և մեկուսիչների վրա:
- ▶ Արդյոք հաղորդալարի բոլոր լարերը լավ միացված են միմյանց:
- ▶ Դյուրաշարժ սյուները ընկած են:
- ▶ Կուտակիչը դեռ լիցքավորվում է:
- ▶ Հողանցման ձողերը և լարերը դեռ լավ միացված են միմյանց:

Պրակտիկ խորհուրդներ

- ▶ Խուսափեք հաղորդակարի ոլորումներից ինչը կարող է հանգեցնել ձգվածության կորստի կամ վնասել հաղորդակարի մետաղական լարերին:
- ▶ Խուսափեք հաղորդակարի բազմակի անգամ պտտել մեկուսիչների վրա: Դա պետք է փաթաթել միայն մեկ անգամ այն էլ հաղորդակարը ուղղորդելու նպատակով:
- ▶ Եթե խնդիր առաջանա օգտագործեք ցանկապատի տեստերը ցանկապատի տարբեր հատվածներում իրական խնդիրը գտնելու համար/լարերի առանձնակի հատվածներում/:
- ▶ Պահել արկղի բանալին ապահով տեղում, քանի որ դա անհարաժեշտ է արկղը բացելու և միացումը անջատելու համար: Լրացուցիչ բանալին պահվում է ԳՄՀԸ (GIZ) Երևանյան գրասենյակում:

Հրատարակվել է

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից

Գրանցված գրասենյակներ՝

Բոն և Էջբորն, Գերմանիա

Կենսաբազմազանության ինտեգրված Կառավարումը Հարավային Կովկասում (ԿԻԿ)

ԳՄՀԸ Հայաստանյան գրասենյակ

Բաղրամյան պող. 4/1,

0019 Երևան, ՀՀ

Հեռ.՝ +374 (0)10 581877

Ֆաքս՝ +374 (0)10 589270

Էլ. փոստ՝ ibis@giz.de

Կայք՝ www.giz.de

www.biodivers-southcaucasus.org

Հեղինակներ՝

Մայքլ Հուբեր

«Ի-Սի-Օ» Էկոլոգիայի ինստիտուտ

Իրականացնող գործընկեր՝

«Շրջակա միջավայրի կայունության
աջակցման կենտրոն» ՀԿ

Նոյեմբեր, 2018 թ.

Թարգմանություն՝

Աղասի Մնացյան

ԳՄՀԸ

Լուսանկարներ՝

ԳՄՀԸ



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT



Environmental Sustainability
Assistance Center NGO



Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում, **ԿԻԿ**

ԳՄՀԸ Հայաստանյան գրասենյակ
Բաղրամյան 4/1, 0019 Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 (0)10 581877

Էլ. Փոստ՝ ibis@giz.de

Կայք՝ www.giz.de

www.biodivers-southcaucasus.org